



# Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



Կարտիր Կիրակի

03 ՄԱՅԻՍ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Կատարելութեան Ձգտում	Էջ 3
Յիսուս Բորոտ Մը Կը Բժշկէ	Էջ 4
Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ  
 «ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ»  
 ԳՐՔԵՆ  
 (13.16-43)

Պօղոս ոտքի ելաւ, ձեռքով նշան ըրաւ որպէսզի լռեն, եւ ըսաւ.

«Ո՛վ իսրայէլացիներ եւ աստուածավախ մարդիկ, մտի՛կ ըրէք: Այս ժողովուրդին՝ իսրայէլի Աստուածը ընտրեց մեր հայրերը, բազմացուց մեր ժողովուրդը որ Եգիպտոսի մէջ որպէս պանդուխտ կ'ապրէր, եւ իր մեծ զօրութեամբ զանոնք հոնկէ հանեց: Շուրջ քառասուն տարի անապատին մէջ կերակրեց զանոնք: Ապա Քանաան երկրի բնակիչ եօթը ազգերը պարտութեան մատնելով, անոնց երկիրը մեր ժողովուրդին տուաւ որպէս ժառանգութիւն: Այս բոլորը եղան մօտաւորապէս չորս հարիւր յիսուն տարիներու ընթացքին: Այնուհետեւ Դատաւորներ տուաւ անոնց, մինչեւ Սամուէլ մարգարէի ժամանակը, երբ մեր ժողովուրդը թագաւոր ուզեց, եւ Աստուած թագաւոր կարգեց Սաւուղը, Կիսի որդին որ Բենիամինի ցեղէն էր, քառասուն տարուան համար: Սաւուղէն ետք անոնց վրայ թագաւոր կարգեց Դաւիթը, որուն մասին նաեւ վկայեց, ըսելով.

«Դաւիթը, Յեսսէի Որդին, սրտիս խօսող անձն է, որ ամբողջութեամբ իմ կամքս պիտի կատարէ»:

«Անոր սերունդէն էր որ Աստուած իսրայէլի տուաւ իր խոստացած Փրկիչը՝ Յիսուսը: Բայց նախքան անոր հրապարակ գալը, Յովհաննէս իսրայէլի ամբողջ ժողովուրդին կը քարոզէր որ ապաշխարեն եւ մկրտուին:

Եւ իր պաշտօնը լրացնելու ժամանակ, Յովհաննէս ըսաւ. «Ո՛վ կը կարծէք զիս: Ես ձեր սպասած անձը չեմ: Ահա ինձմէ վերջ կու գայ անիկա, որուն կօշիկները հանելու իսկ արժանի չեմ ես»:

«Եղբայրներ, Աբրահամեան տոհմի զաւակներ եւ ձեր մէջ գտնուող աստուածավախ մարդիկ. փրկութեան այս պատգամը Աստուած ձեզի՛ ղրկեց: Որովհետեւ Երուսաղէմի բնակիչները եւ իրենց իշխանները չճանչցան Յիսուսը, եւ զայն դատապարտելով՝ կատարած եղան խօսքը մարգարէներուն որ ամէն Շաբաթ կը կարդային: Եւ թէպէտ մահուան արժանի յանցանք մը չգտան անոր վրայ, սակայն պահանջեցին Պիղատոսէն որ սպաննուի: Երբ անոր մասին բոլոր գրուածները կատարած եղան, զայն խաչէն իջեցուցին եւ գերեզման դրին: Բայց Աստուած զայն մեռելներէն յարուցանեց, եւ Յիսուս բազմաթիւ օրեր երեւցաւ անոնց՝ որոնք իրեն հետ Գալիլիայէն Երուսաղէմ

«Իմ որդիս ես դուն, այսօ՛ր քեզ ծնայ»:

եկած էին, եւ որոնք հիմա իր վկաներն են ժողովուրդին առջեւ: Մենք ալ, ահա, ձեզի կ'աւետենք, թէ Աստուած մեր հայրերուն տուած իր խոստումը կատարեց մեր օրերուն, որ անոնց որդիներն ենք: Այդ խոստումը կատարեց՝ Յիսուսը յարուցանելով, ինչպէս երկրորդ Սաղմոսին մէջ ալ գրուած է.

«Իմ որդիս ես դուն, այսօ՛ր քեզ ծնայ»:

Նոյն այն իրողութիւնը, որ Աստուած զայն մեռելներէն յարուցանեց եւ անիկա այլեւս բնաւ մահ պիտի չտեսնէ, խոստում մըն է՝ մեզի ուղղուած, որովհետեւ Աստուած այսպէս կ'ըսէ.

«Ձեզի պիտի տամ այն իսկական օրհնութիւնը որ Դաւիթի խոստացայ», եւ ինչպէս ուրիշ Սաղմոսի մը մէջ սաղմոսագիրը կ'ըսէ. «Պիտի չթողուս որ քու ծառայիդ

մարմինը փտուքիւն տեսնէ”:

«Արդ, Դաւիթ իր սերունդին մէջ Աստուծոյ ծառայելէ ետք մեռաւ եւ իր հայրերուն քով թաղուեցաւ, եւ իր մարմինը փտեցաւ: Բայց Աստուած յարուցանեց Յիսուսը, որուն մարմինը փտուլթիւն չտեսաւ: Ուստի իմացէ՛ք, եղբայրներ, Յիսուսի միջոցաւ մեղքերու թողութիւն կը քարոզուի ձեզի: Ո՛վ որ անոր կը հաւատայ՝ կ'արդարանայ իր բոլոր մեղքերէն, որոնցմէ չկրցաք արդարանալ Մովսէսի Օրէնքին միջոցաւ: Զգո՛յ՜ք եղէք ուրեմն որ ձեր վրայ չգայ այն ինչ որ մարգարէները կ'ըսեն:

“Տեսէ՛ք, ո՛վ արհամարհողներ, գարմացէ՛ք եւ կորսուեցէ՛ք. որովհետեւ ձեր օրերուն այնպիսի գործ մը պիտի ընեմ, որուն պիտի չհաւատաք, նոյնիսկ երբ մէկը պատմէ ձեզի”»:

Երբ Բառնաբաս ու Պօղոս ժողովարանէն դուրս ելան, մարդիկ կ'աղաչէին որ միւս Շաբաթ եւս նոյն նիւթին մասին խօսին: Ժողովուրդին ցրուելէն ետք, բազմաթիւ հրեաներ եւ հրէութեան դարձած բարեպաշտ օտարազգիներ հետեւեցան Պօղոսի եւ Բառնաբասի, որոնք անոնց հետ խօսեցան եւ համոզեցին զանոնք որ շարունակեն Աստուծոյ շնորհքին մէջ մնալ:

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ**

**ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ**

(5.1-14)

Երէցներ, որպէս երիցակից մը որ ձեզի պէս վկայ եմ Քրիստոսի չարչարանքներուն եւ ձեզի հետ ալ մասնակից պիտի ըլլամ գալիք փառքին որ պիտի յայտնուի, կ'աղաչեմ ձեզի. ձեզի վստահուած Աստուծոյ հօտը արածեցէք ո՛չ թէ իբր պարտադրանք կատարելով վերակացութեան ձեր պաշտօնը, այլ կամաւորաբար, ինչպէս Աստուած կ'ուզէ: Ո՛չ թէ դրամի սիրոյն,

այլ յօժարութեամբ: Ո՛չ թէ ձեզի վստահուած մարդոց ձեր անձերը պարտադրելով, այլ օրինակ ըլլալով ձեր հօտին. որպէսզի երբ Հովուապետը յայտնուի՝ անթառամ փառքի պսակը ընդունիք:

Նոյնպէս ալ դուք,

“Աստուած հակառակ է ամբարտաւաններուն, մինչ խոնարհներուն շնորհք կու տայ”:

երիտասարդներ, հնազա՛նդ եղէք ձերերուն: Բոլորդ ալ խոնարհաբար ծառայեցէք իրարու, որովհետեւ ինչպէս Առակաց Գիրքը կ'ըսէ.

“Աստուած հակառակ է ամբարտաւաններուն, մինչ խոնարհներուն շնորհք կու տայ”:

Հետեւաբար Աստուծոյ հօր ձեռքին տակ խոնարհեցէք, որպէսզի երբ յարմար ժամանակը գայ՝ ձեզ բարձրացնէ: Ձեր բոլոր հոգերը Աստուծոյ ձգեցէք, որովհետեւ ի՛նքը կը հոգայ ձեր մասին:

Արթուն եւ պատրաստ եղէք, որովհետեւ ձեր թշնամին՝ Սատանան առիւծի պէս մոնչելով կը շրջի եւ կլլելու համար մէկը կը փնտռէ: Հաստատուն հաւատքով դէմ դրէք անոր, գիտնալով որ աշխարհի մէջ բոլոր ձեր եղբայրներն ալ նոյն չարչարանքներէն կ'անցնին: Եւ բոլոր շնորհքներու պարգեւիչը՝ Աստուած, որ կանչեց ձեզ, նկատի ունենալով որ չափով մը մասնակից եղաք Յիսուսի չարչարանքներուն, պիտի ձեզ կազդուրէ, զօրացնէ եւ ամուր հիմերու վրայ հաստատէ ձեզ: Յաւատեան ի՛րն են իշխանութիւնն ու փառքը: Ամէն:

Այս հակիրճ նամակը ձեզի գրեցի Սիդուանոսի ձեռքով - որ ըստ իս մեր հաւատարիմ եղբայրներէն է - որպէսզի քաջալերեմ ձեզ եւ վստահեցնեմ թէ Քրիստոսի չարչարակից ըլլալը Աստուծմէ տրուած իսկական շնորհք մըն է, որ դուք կը վայելէք ապահովաբար: Այստեղ, Բաբելոնի մէջ գտնուող եկեղեցին, որ ձեր ընտրելակիցն է, կ'ողջունէ ձեզ: Նոյնպէս բարեւներ Մարկոսէն, իմ որդիէս: Սիրոյ համբոյրով ողջունեցէք զիրար: Խաղաղութի՛ւն ձեր բոլորին որ Քրիստոս Յիսուսի միացած էք: Ամէն:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ**

**ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ**

(5.19-30)

Յիսուս անոնց ըսաւ. «Հաստատ գիտցէք, թէ մարդու Որդին ինք իրմէ ոչինչ կը կատարէ, այլ կը կատարէ միայն այն՝ ինչ որ կը տեսնէ թէ Հայրը կը կատարէ:

Ձեր բոլոր հոգերը Աստուծոյ ձգեցէ՛ք, որովհետեւ ի՛նքը կը հոգայ ձեր մասին:

Սիրոյ համբոյրով ողջունեցէ՛ք զիրար:

Որդին կեանք կու տայ անոնց՝ որոնց ինք կ'ուզէ:

Որովհետեւ ինչ որ Հայրը կը գործէ, Որդին ալ նոյնը կը գործէ: Հայրը կը սիրէ Որդին եւ անոր ցոյց կու տայ ինչ որ ինք կը կատարէ: Տակաւին ձեր տեսածներէն աւելի սքանչելի գործեր ալ ցոյց պիտի տայ

Որդիին, այնպէս որ դուք պիտի զարմանաք: Ինչպէս որ Հայրը մեռելները կը յարուցանէ եւ կեանք կու տայ անոնց, նոյնպէս ալ Որդին կեանք կու տայ անոնց՝ որոնց ինք կ'ուզէ: Եւ Հայրը ոեւէ մէկը չի դատեր, այլ դատելու իշխանութիւնը ամբողջութեամբ յանձնած է իր Որդիին, որպէսզի բոլորն ալ

«ան որ իմ խօսքերս կը լսէ եւ կը հաւատայ անոր որ զիս դրկեց, յաւիտեան կեանք կ'ունի»...

պատուեն Որդին, ինչպէս որ Հայրը կը պատուեն: Ան որ չի պատուեր Որդին, չի պատուեր Հայրը որ զայն զրկած է:

«Հաստատ գիտցէք, ան որ իմ խօսքերս կը լսէ եւ կը հաւատայ անոր որ զիս դրկեց, յաւիտեան կեանք ունի եւ պիտի չզատապարտուի, որովհետեւ արդէն իսկ մահէն կեանքի անցած է: Վստահ

եղէք, ժամանակ կու գայ — եւ արդէն իսկ եկած է — երբ մեռելները Աստուծոյ Որդիին ձայնը պիտի լսեն եւ լսողները պիտի ապրին: Որովհետեւ,

ինչպէս որ Հայրը կեանք պարգեւելու գորութիւնը ունի իր մէջ, այդ գորութիւնը տուած է նաեւ Որդիին: Նոյնպէս ալ դատելու իշխանութիւնը տուաւ Որդիին, որովհետեւ անիկա մարդու Որդին է: Ուրեմն մի՛ զարմանաք որ ըսի, թէ

... կը գործադրեմ ո՛չ թէ իմ կամքս, այլ կամքը անոր՝ որ զիս դրկեց»:

ահա կու գայ ժամանակը, երբ բոլոր անոնք որոնք գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն անոր ձայնը եւ դուրս գան. անոնք որ բարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ ապրին, իսկ անոնք որ չարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ դատապարտուին: Ես ինձմէ չէ որ կը դատեմ, այլ կը դատեմ այնպէս ինչպէս Հօրմէս կը լսեմ. եւ ուրեմն իմ դատաստանս արդար է, որովհետեւ կը գործադրեմ ո՛չ թէ իմ կամքս, այլ կամքը անոր՝ որ զիս դրկեց»:



## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՒԱՏՔ

### ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՁԳՏՈՒ

ԿԱՐՕ ՆՈՒՈՒՏԵԱՆ

**Հարցում.**  
**Կատարելապաշտութիւնը** (perfectionism) լաւ է չէ՞, մանաւանդ որ Յիսուս ըսաւ. «դուք կատարեալ եղէք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է» (Մտ 5.48):

**Պատասխան.**  
 Ոչ: Շատ մեծ տարբերութիւն կայ կատարելապաշտութեան եւ Յիսուսի կատարելութեան կոչին միջեւ: Այստեղ կարելոք է յստակացնել որ կատարելապաշտութեամբ կը հասկնամամէն ինչի մէջ գերազանցելու մղումը: Այս մղումը արդի հոգեբանութեան մէջ անպայմանօրէն չէ նանչցուած որպէս դրական, որովհետեւ ընդհանրապէս կը կեդրոնանայ ուրիշին կամ ուրիշին արարքներուն հետ ինքզինք կամ սեփական արարքները բաղդատելու վրայ:

Յիսուս մեզ կը կանչէ մեր լաւագոյնը ըլլալու: Մեր լաւագոյնը ժամանակի ընթացքին կը փոխուի, կրնայ յառաջդիմել կամ յետադիմել ըստ մեր ֆիզիքական, մտային, հոգեբանական եւ հոգեւոր փոփոխուող վիճակներուն եւ փորձառութեան զարգացումին: Բայց մեր լաւագոյնը ուրիշին լաւագոյնը չէ, որովհետեւ իւրաքանչիւր անհատ բոլորովին յատուկ անձ մըն է: Յիսուսի կոչը մեզ ուրիշներու հետ բաղդատելու համար չէ, այլ աչքերնիս ուղղելու համար է դէպի երկնաւոր Հօր կատարելութիւնը՝ իբր նպատակակէտ.

**Յիսուսի կոչը մեզ ուրիշներու հետ բաղդատելու համար չէ, այլ աչքերնիս ուղղելու համար է դէպի երկնաւոր Հօր կատարելութիւնը՝ իբր նպատակակէտ.**

ման գործընթացի միջոցաւ ուղղուիլ դէպի առաւել կատարեալը: Կատարելութեան ձգտումը զարգացման վերամբարձ ուղղութիւն ունի. կոչ մըն է Քրիստոսի նմանելու եւ ոչ թէ «սառած» վիճակի մը հասնելու՝ ըստ կատարելապաշտութեան:

Իրողութիւնն այն է որ կատարեալ չենք: Այս իրականութիւնը պէտք է միշտ յիշենք եւ հետեւաբար կատարելութեան ճամբէն փախելով չդադրինք հոգեւորապէս անելէ: Այնքան ատեն որ այս ֆիզիքական մարմնին մէջ ենք՝ չենք

կրնար ամբողջովին կատարեալ ըլլալ, որովհետեւ տակաւին ամբողջովին չենք կրնար միանալ կատարեալ Աստուծոյ:

Կատարելութեան ձգտիլ կը նշանակէ.

- 1.- Հասողութիւն ունենալ Աստուծոյ կատարեալ պատկերին որ մեր մէջն է,
- 2.- զայն արտացոլացնել մեր աւորեալ կեանքին մէջ,

3.- քալել իքնակատարելագործումի ճամբէն,

4.- բաց ըլլալ Աստուծոյ շնորհքին առջեւ, որ մեր անկատար ջանքերը կը բեղմնաւորէ ու մեզ աւելի ու աւելի կը մօտեցնէ Իրեն՝ մեր հոգեւոր կեդրոնին:

Հոգեւոր փառաբանութեամբ Աստուծոյ հետ միութեան այս իրագործումը աւելի Աստուածային շնորհքի ներգործութեան արդիւնք է քան՝ մարդկային ջանքի:

Կատարելութիւնը հոգեւոր վիճակ է եւ ոչ թէ՝ ֆիզիքական շրջապատ: Մինչդեռ կատարելապաշտութիւնը իբր կալուած ունի ֆիզիքական շրջապատը եւ կը հիմնուի անոր տիրապետելու գաղափարին վրայ: Կատարելապաշտը «Հանգիստ» կը զգայ երբ իր շրջապատը իր որոշած պայմաններուն ենթարկուած է:

Կատարելապաշտութեան ուղղութիւնը դուրսէն ներս է. հանգիստ կը զգանք երբ յաջողինք տիրապետել մեր ֆիզիքական շրջապատին վրայ եւ արտաքին պայմաններով ստեղծենք ներքին «կատարեալ» վիճակ:

Բայց կատարելութեան ձգտումը ամբողջովին հակառակ ուղղութեան կը հետեւի. ներսէն դուրս: Մեր սլացքը դէպի կատարելութիւն փորձ մըն է գտնելու եւ պահելու մեր ներքին ուղղութիւնը դէպի Աստուած: Այդ ձգտումը հաստատուած է վստահութեան վրայ՝ թէ Աստուծոյ կամքով ամէն բան լաւ պիտի ըլլայ, ներառեալ ֆիզիքական միջավայրը եւ երբեմն

նոյնիսկ հակառակ անոր:

Կատարելապաշտութիւնը հիմնուած է մարդկային անիրապաշտ ակնկալութիւններու վրայ եւ ժխտումն է մարդկային անկատար մեր բնութեան: Ան կը կարծէ ուղղութիւն տալ Աստուծոյ շնորհքին եւ կը փորձէ մարդկային ջանքով զԱստուած հակակշռի տակ առնել:

Ակնկալութիւն ունենալ տարբեր է հաւատքի եւ յոյս ունենալէ: Մինչ հաւատքն ու յոյսը անսահման կարելիութիւններու յանձնուող անհատը ամբողջականօրէն կ'ազատագրեն, ակնկալութիւնները միտքը կը կապեն սահմանափակ ելքի: Քրիստոնեային գերագոյն եւ ամենահաւաստի ակնկալութեան աղբիւրը պէտք է ըլլայ իր վստահութիւնը Աստուծոյ վրայ, որ մեզ մինակ չի թողուր մեր աւորեալ դժուարութիւններուն մէջ եւ որ անչափելի ողորմութեամբ միշտ պատրաստ է ներելու մեր մեղքերն ու բուժելու մեր խորագոյն վերքերն իսկ:

Կատարելապաշտութեան կը պակսի սիրտը եւ ան ամբողջութեամբ հաստատուած է գլխուն մէջ: Կատարելութեան կոչը ամբողջ անձը միացնելու կոչ է:

Մեր ներքին կեդրոնէն բխած լաւագոյնը Աստուծոյ համար կատարելութիւն է:

**ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ**  
**ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ**  
ՀԵՂՈՒԱԿ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԲՈՐԵԱՆ  
ԽԱՐԱԳՐԻ՝ ԳՆԱԿԱ Ք. Գ.

Ը

ՅՐԱՄԱ ԲՈՐՈՏ ԱՐ ԱՐ ԲԺՇԿԷ:

«Երբ Յիսուս լեռնէն վար իջաւ, մեծ բազմութիւն մը հետեւեցաւ իրեն: Եւ ահա բորոտ մը իրեն մօտենալով՝ ծունկի եկաւ եւ ըսաւ.

- Տէ՛ր, եթէ ուզես՝ կրնաս գիս մաքրել:

Յիսուս ձեռքը երկարեց, դպաւ անոր եւ ըսաւ.

- Կ'ուզեմ, մաքրուէ՛:

Եւ անմիջապէս անոր բորոտութիւնը մաքրուեցաւ:

Յիսուս ըսաւ անոր.

- Նայէ՛, ոնէ՛ մէկուն բան չըսես. այլ գնա եւ դուն քեզ փահանային ցոյց տուր: Ապա, իբրեւ ժողովուրդին վկայութիւն՝ թէ բորոտութենէդ մաքրուած ես՝ գոհող մատուցանէ, ինչպէս որ Մովսէս հրամայած է» (1-4):

**Հարուստ բովանդակութիւն մը ունի այս Հաստուածը:**

Յիսուսի Լերան Քարոզ կոչուած ուսուցումները աւարտեցան:

Եւ մինչ նախորդ բաժնին մէջ Յիսուսի դիմաց բազմութիւն մը կար, այստեղ անձ մըն է: Անձ մը՝ որ բորոտ մըն է:

Պիտիտեսնենք, որ 8-րդ եւ 9-րդ դարերու մէջ գործունէութեան դրուագներու շարք մը ունինք: Ուսուցումներէն վերջ, ուրեմն, կը տրուին գործերը: Եւ գործունէութեան մէջ, Մատթէոս աւետարանիչ բորոտին բժշկութիւնը կը յիշէ: Ինքնին հետաքրքրական է այդ ընտրութիւնը:

Մատթէոսի նպատակը յստակ է մեզի: Ան իր աւետարանին մէջ ժամանակագրական կարգ պահած չէ: Ինչպէս Լերան Քարոզին առիթով ըսի, այնտեղ ամփոփուած Յիսուսի ուսուցումները մէկ անգամէն չեն տրուած իր կողմէ: Տարբեր տարբեր առիթներով Յիսուսի կատարած ուսուցումները աւետարանիչը քով քովի բերած է եւ հաւաքածոյ մը կազմելով՝ մեզի ներկայացուցած:

Նոյնպէս 8-րդ եւ 9-րդ դարերու գլուխներով տրուած դրուագները յաջորդաբար չէ, որ տեղի ունեցած են, այլ աւետարանիչը ինք զանոնք մէկտեղած է: Կարելի՞ է երեւակայել, թէ երբ Յիսուս այս գործունէութեան մէջ էր՝ միաժամանակ չէր ուսուցաներ: Ո՛չ:

Յիսուսի կեանքին մէջ խօսք եւ գործ միշտ միասին եղան:

Յիսուսի կեանքին մէջ խօսք եւ գործ միշտ միասին եղան: Ան երբ տեղ մը գնաց, միայն բժշկելու համար չգնաց, այլ նաեւ գնաց՝ քարոզելու եւ ուսուցանելու համար:

Գանք բորոտին:

Հին ժամանակ երբ բորոտ կ'ըսուէր, բազմաթիւ բաներ կը հասկնային:

Եթէ Ղեւտացիներուն գիրքը կարդանք, պիտի տեսնենք որ երկու գլուխներ (13 եւ 14) մորթային հիւանդութիւններու մասին են: Այդ գլուխները մորթային ուռեցքներու եւ անոնց կապուած օրէնքներու, նաեւ բորոտութեան ու անկէ մաքրուելու կը վերաբերին: Սակայն յիշեալ մորթային հիւանդութիւնները եւ բորոտութիւնը բուժելի էին: Իսկ Յիսուսի ժամանակ խօսուած բորոտութիւնը անբուժելի հիւանդութիւն մըն էր: Եւ ոչ թէ միայն անբուժելի, այլ նաեւ հառելի:

Բորոտութիւնը մորթային խլիրդ մըն է: Անիկա կը տարածուի մարմնին մէջ եւ անոր

անդամները կը ձեւագեղծէ ու ենթակային մահուան պատճառ կ'ըլլայ:

Անիկա չափազանց վարակիչ հիւանդութիւն մըն էր: Այդ պատճառով ալ նախազգուշական միջոցներ ձեռք առնուած էին: Բորոտներուն թոյլ չէին տար, որ տան կամ քաղաքին մէջ մնայ, այլ դժբախտ այդ մարդիկը տուներէն եւ քաղաքներէն դուրս կը վտարէին: Չէին սպաններ, բայց կ'ողզէին որ մարդոցմէ ամբողջութեամբ կտրուած եւ հեռու ապրին:

Բորոտները երբ մարդ տեսնէին՝ պարտաւոր էին զգուշացնել պոռալով՝ «Բորոտ եմ, բորոտ եմ», որպէսզի ոչ ոք իրենց մօտենալով՝ հիւանդանար: Անոնք նաեւ «Պիղծ եմ, պիղծ եմ» կը պոռային, իբր յայտարարութիւն այն հաւատալիքին թէ՛ իրենց անմաքրութիւնը պատիժ էր իրենց մեղքերուն:

Արդ, բորոտները Ֆիզիքական եւ հոգեկան անտանելի վիճակի մատնուած մարդիկ էին:

Աւետարանիչին նկարագրած բորոտը հաւանաբար լսած էր Յիսուսի հրաշագործութեան մասին, եւ անոր հանդիպած, երբ մարդիկ չկային անոր շուրջ: Ու ամենայն վստահութեամբ ըսած. «Տէ՛ր, եթէ ուզես՝ կրնաս զիս մաքրել»:

«Տէ՛ր, եթէ ուզես՝ կրնաս զիս մաքրել»:

Այս մարդուն մէջ հաւատքը այնքան զօրաւոր էր, որ գիտէր թէ Յիսուս սովորական մարդ չէր եւ կրնար իրեն բժշկութիւն պարգեւել:

Յիսուս անոր կատարեալ վստահութեան դիմաց՝ պատասխանեց. «Կ'ողեմ, մաքրուէ՛»: Անմիջապէս մարդուն բորոտութիւնը կը մաքրուի: Ապա Յիսուս պատուէր կու տայ, որ «Կ'ողեմ, հրաշքին մասին չխօսի մարդը, այլ անոր կ'ըսէ, որ երթայ քահանային ցոյց տայ ինքզինք եւ Մովսէսին պատուիրած զոհը մատուցանէ:

«Կ'ողեմ, հրաշքին մասին չխօսի մարդը»:

Երկու հարցում: «Յիսուս ձեռքը երկարեց» արտայայտութիւնը կը նշանակէ, թէ ան դպաւ բորոտին: Բժշկութեան կերպ չէ ատիկա: Յիսուս այդպիսով՝ հիւանդին հետ անձնական կապ մը ստեղծեց: Թէեւ այլ քանի մը պարագաներով Յիսուս որոշ միջոցներ օգտագործած է, սակայն անոնք բուժարար դեղեր չեն. այսպէս օրինակ

երբ ի ծնէ կոյրը բժշկեց ցեխ ձեփելով անոր աչքերուն (տե՛ս ՅՏ 9.6-7): Այդ միջոցները յատուկ նպատակով մը օգտագործուած են: Յիսուսի՝ համար նշանակութիւն ունեցած են անոնք: Մեզի համար դիւրին չէ անոնց նշանակութիւնը հասկնալը: Յիսուս բժշկելու համար միջոցներու պէտք չունէր: Իր հրամանը բաւարար էր, որ մէկը բժշկուի:

Առաջին. Ինչո՞ւ համար Յիսուս կ'արգիլէ, որ բժշկեալը ոեւէ մէկուն բան ըսէ: Շնորհք մըն է կամ պարգեւ մըն է, որ ըրած է, բայց չ'ուզեր որ այդ շնորհքին կամ պարգեւին մասին մարդ գիտնայ:

Երկրորդ. Արդեօք ինչո՞ւ Յիսուս կը պատուիրէ, որ բորոտը երթայ եւ Մովսէսի տուած օրէնքը գործադրէ:

Առաջինին փորձենք բացատրութիւն մը տալ:

Իր գործունէութեան մէջ երեւութապէս երկու «հակասական» երեսներ կային: Ասիկա շփոթեցուցիչ է: Մէկ կողմէ Յիսուս կ'ուզէր, որ մարդիկ զինք ճանչնան որպէս իսկական մեսիան, իսկ միւս կողմէ զգոյշ էր, որովհետեւ ժողովուրդին մէջ մեսիայի սխալ հասկացողութիւն մը տարածուած էր. ժողովուրդը քաղաքական ազատագրիչի մը կը սպասէր:

Անշուշտ Յիսուսի զգուշութիւնը վախէ չէր գար, այլ ան կ'ուզէր, որ ժողովրդային թիւրիմացուցութեան մէջ չխօսուէր իր ըրածին մասին: Յիշեցէք Ծաղկազարդի դրուագը: Երբ վերջին թափօրը ծայր առաւ: Արդէն երիքովէն ուխտաւորներ կամաց կամաց սկսան միանալ Յիսուսի թափօրին: Եւ սկսան իրենց խանդավառութիւնը արտայայտել սաղմոսներով եւ զանազան կերպերով: Եւ երբ Երուսաղէմի մօտեցան՝

ամբողջ քաղաքը դղրդալ սկսաւ (Մտ 21.10):

Ինչպէ՞ս քաղաք մը կը դղրդայ:

Պարզապէս ոտքերուն ձայնէ՞ն: Ո՛չ:

Այս դղրդալը կը թելադրէ, որ մարդիկ մտածելով, թէ փրկութեան պահը հասած է՝ խելագարներու վիճակ առած էին: Երբ Յիսուս Երուսաղէմ կը մտնէր՝ իր մտքին մէջ տարբեր բան կար, իսկ զինք դիմաւորողներուն մտքին մէջ՝ տարբեր:

Միւս կողմէ, առիթով մը երբ Գալիլիոյ լիճին արեւելեան կողմը Դեկապոլիս կոչուած շրջանին Գերգեսայի մէջ դիւահար մը բժշկեց եւ բժշկութենէն ետք Յիսուս հակառակ բժշկեալին ցանկութեան՝ ըսաւ անոր որ իրեն չհետեւի, այլ մնայ իր քաղաքին մէջ եւ իր ընտանիքէն ներս եւ շրջանին մէջ պատմէ եղածը (ՂԿ 8.26-39): Որովհետեւ այդ քաղաքը հեթանոսներով շրջապատուած էր, եւ ազգայնական ու թիւր մեսիականութեան մտահոգութիւնը չունէր:

Քահանային մօտ դրկելուն մասին:

Յիսուս Օրէնքը լուծելու չէր եկած, այլ լրացնելու: Ինք Օրէնքը գործադրող մըն էր: Եւ նաեւ կը պահանջէր, որ իրեն դիմողները Օրէնքը գործադրեն: Օրինապահութեան բարիք մը ըլլալը կը յայտնէր Յիսուս: Բայց նաեւ այլ եւ հիմնական նպատակ մըն ալ ունէր: Ղուկաս աւետարանիչ կը պատմէ, թէ առիթով մը Յիսուս տասը բորոտներ բժշկեց: Սակայն անոնցմէ միայն մէկը վերադարձաւ եւ Յիսուսի առջեւ ծունկի գալով շնորհակալութիւն յայտնեց (տե՛ս ՂԿ 17.11-19):

Բորոտին մերդրուագին մէջ, անոր բժշկուելէն ետք վերադարձի եւ շնորհակալութեան խօսք չկայ: Փոխարէնը կայ Յիսուսի պահանջքը՝ Օրէնքը գործադրելու: Յիսուս անոր կ'ուզէ սորվեցնել, թէ ան պարտաւորութիւն մը ունի: Ան պէտք է երախտապարտ ըլլայ Աստուծոյ, որ զինք բժշկութեան արժանացուց: Զոհը միջոց մըն է: Աստուած մեզմէ զոհ չ'ուզեր: Աստուծոյ պահանջած իսկական զոհը՝ երախտագէտ սիրտըն է: Այն սիրտը որ երախտագիտութեամբ կը մօտենայ Աստուծոյ՝ լաւագոյն զոհ մատուցած կ'ըլլայ: Մարդիկ շատ յաճախ կը մոռնան իրենց երախտագիտութիւնը արտայայտելու: Յիսուս Օրէնքին գործադրութիւնը պատւիրելով՝ կը յիշեցնէ, որ բժշկեալը պէտք չէ մոռնայ Երկնաւոր Բուժարարին իր երախտագիտութիւնը յայտնել:

Բորոտին այս պատմութիւնը նաեւ մեզի կը թելադրէ, որ երբ մենք մեղքերուն մէջ կը թաթխուինք՝ բորոտի պէս կ'ըլլանք: Եւ մենք պէտք ունինք այդ վիճակէն դուրս գալու: Սակայն մարդ էակը ինք անձնապէս ի վիճակի չէ մեղքերու բորոտութենէն դուրս գալու:

Յիսուսի զգուշութիւնը վախէ չէր գար, այլ ան կ'ուզէր, որ ժողովրդային թիւրիմացութեան մէջ չխօսուէր իր ըրածին մասին:

Աստուծոյ պահանջած իսկական զոհը՝ երախտագէտ սիրտն է:

Միայն Աստուած է, որ զայն կրնայ բժշկել կամ դուրս բերել մեղքերու բորոտութենէն: Եթէ Աստուած ինք չհրամայէ որ մաքրուինք՝ մենք չենք կրնար մաքրուիլ:

... մենք պատրաստ ենք մեր բորոտութենէն կամ անմաքրութենէն դուրս գալու:

Աստուած միշտ պատրաստ է հրամայելու, որ մենք մաքրուինք:

Սակայն մենք պատրաստ ենք մեր բորոտութենէն կամ անմաքրութենէն դուրս գալու: Թէ ինչպէ՞ս է, որ մենք մեր անմաքրութենէն դուրս կու գանք:

Ապաշխարութեամբ եւ մեր մեղքերը Քրիստոսի

խաչին առջեւ թողլով: Քրիստոսի խաչը մեր մեղքերուն քառութիւնն է եւ թողութիւնը՝ եթէ մենք անոր կը մօտենանք զղջումով:

Հարցում մը:

Յիսուս որպէս դաս մեզի կը սորվեցնէ երախտագիտութիւն յայտնել Աստուծոյ: Բայց արդեօք ուրիշ բան մըն ալ կ'ուզէ՞ սորվեցնել:

Ներկայ աշխարհին մէջ բորոտութիւնը առհասարակ բուժելի հիւանդութիւն է: Քանի որ այդպէս է, այս դրուագը մեզի պատգամ մը ունի՞ տալիք:

Մեր չորրորդ դարու Ներսէս Մեծ կաթողիկոսը օրինակառաւ Յիսուսի շատ մը բժշկութիւններէն, որպէսզի այդ բժշկութիւնները միայն իր մտքին մէջ պատմութիւններ չմնան, եւ իր ու մեր ժողովուրդի կեանքին մէջ իրականութիւն դառնան:

Ինք չէր կրնար բորոտները եւ այլ զանազան հիւանդութիւններէ տառապողները բուժել, բայց կրնար պատուիրել անոնց խնամատարութեան եւ բուժման կազմակերպումը: Եւ գիտենք, որ ան Հայաստան աշխարհի տարբեր տարբեր կողմերը հիւանդանոցներ բացաւ, որպէսզի օգնէ հիւանդներուն:

Ներկայիս ալ՝ մէկը կրնայ հիւանդանոց չիսել, ուրիշ մը՝ կրնայ օգտակար ըլլալ, որ մարդ էակը վերականգնի: Բոլորս ալ ի վիճակի ենք ընելու գործ մը, որով մեղքի բորոտութիւնը վերնայ թէ՛ մեզմէ եւ թէ՛ մեր շրջապատէն:

Մենք գիտենք, որ մեր քրիստոնէական կեանքին մէջ պակասող շատ բաներ կան: Երբ կը սերտենք այս կամ այն հատուածը՝ որոշ ճշմարտութիւններ կը յայտնուին մեզի: Բայց

այդ ճշմարտութիւններուն յայտնութիւնը իր նպատակին ծառայած կ'ըլլայ՝ եթէ մեր կեանքը մօտեցնենք անոր:

Մենք կը հաւատանք, որ այդ մօտեցումը միայն մարդկային ճիգով չ'ըլլար, այլ՝ Տիրոջ օգնութեամբ է: Աստուած մեզի կ'օգնէ, որ մենք այդ ճշմարտութիւններուն մօտեցնենք մեր կեանքը: Այդ մօտեցումը կ'օգնէ, որ մենք մեզ աւելի ճանչնանք:

Մեր այս սերտողութիւնը կ'ուզեմ կնքել այսպէս:

Նկատի ունենալով, որ Աստուծոյ կը պարտինք այդ մօտեցումը, շնորհակալ սիրտ պէտք է ունենանք: Երախտագիտութեան զգացումով պէտք է լեցուի մեր սիրտը:

Հոգեկան աշխարհին միակ հարստութիւնը՝ երախտագիտութեան զգացումն է:

Չկայ աւելի լեցուն սիրտ մը քան երախտագէտ սիրտը: Որովհետեւ անիկա իր վայելած պարգեւներուն գիտակից սիրտն է: Այն մարդը որ բազմատեսակ պարգեւներ ունի, բայց անգիտակից է անոնց, բնականօրէն երջանիկ եւ ուրախ չի կրնար ըլլալ: Մինչդեռ այն մարդը որ գիտակից է՝ երջանիկ եւ ուրախ է: Անոր սիրտը ջերմացած է, որովհետեւ իր վայելած պարգեւներուն փոխարէն իր երախտագիտութիւնը կը յայտնէ: Թէ՛ ընկերային փոխյարաբերութեան մէջ եւ թէ՛ Աստուծոյ հետ մեր փոխյարաբերութեան մէջ՝ երախտագիտութեան զգացումը մեր սիրտը կը ջերմացնէ:

Երախտագիտութեան զգացումը կարեւոր է: Անիկա մեր իսկ անձին լեցունութեան համար կարեւոր է: Անիկա մեզ վեր կը բերէ մեռելութեան աշխարհէն, նաեւ՝ անասնական աշխարհէն եւ մեզ կը դնէ գիտակից մարդու վիճակին մէջ: Երախտագիտութեան զգացումը ո՛չ թէ միայն անհատին ուրախութիւն կը պատճառէ, այլեւ անոր անձէն դուրս կը յորդի, եւ ուրիշներու ալ կեանքին մէջ այդ ուրախութենէն բաժին կը հանէ: Երախտագէտ սրտին հարստացումէն՝ ուրիշներն ալ կը հարստանան:

Աստուած մեզի կ'օգնէ, որ մենք այդ ճշմարտութիւններուն մօտեցնենք մեր կեանքը:

Հոգեկան աշխարհին միակ հարստութիւնը՝ երախտագիտութեան զգացումն է:

## ԵՐԵՍՆՈՐԵԱԿ

Հրագրաբեր, 07 Մայրս 2009

11.00 Աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Կրոնար, 10 Մայրս 2009

**Տօս Երեման Սոբբ Խաչին**

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երեւոյն, 12 Մայրս 2009

19.00 Երիտասարդական զրոյց՝  
«Ուխտատեղիներ եւ Արքայալիներ»

Հրագրաբեր, 14 Մայրս 2009

11.00 Աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

12.00 Մայրերու օրուայ ճաշկերոյթ

Կրոնար, 17 Մայրս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագրաբեր, 21 Մայրս 2009

**ՀԱՄԱՐՁՈՒՄ**

11.00 Ս. Պատարագ

Որբաթ, 22 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Հաբաթ, 23 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Կրոնար, 24 Մայրս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երուոյն, 25 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Երեւոյն, 26 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

19.00 Ֆիլմի ցուցադրութիւն՝  
“The Exorcism of Emily Rose”

Չորեքշաբթի, 27 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Հրագրաբեր, 28 Մայրս 2009

11.00 Հոգեգալստեան աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Որբաթ, 29 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Հաբաթ, 30 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Կրոնար, 31 Մայրս 2009

**Հոգեգալստեան**

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

## **ՍՈՒՐԲ ԶԱՏԿՈՒԱՅ ԻՒՂԱԳԻՆ**

Ս. Զատարայ Տօսն Առաի,  
ՎԱՏԱՀ ԵՆԵ,  
ՈՐ ԱԵՐ ԲԱՐԵՊԱՇՏ ԺՈՂՈՎՈՒՐԻՆ  
ՊԻՏԻ ԶԱՌՆԱՅ  
ՎԱՏԱՐԵՂՈՒ ԻՒՂԱԳԻՆԻ ԻՐ  
ԱՐՏԱՐՈՒՄ ԱՌԻՐԱՏՈՒԹԻՒՆԸ:

## **ՏՆՕՐՀՆԷՔ**

Տնօրհներ փափարոյ  
ընտանիքները,  
թոյ բարեհաճին դիմել  
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,  
հեռաձայնելոյ 514 331 5445 x203  
թիւին,  
կամ՝ 514 909 5203 թիւին:

Հոգեհաճախեան ՁԵՐ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐՈՒ ԱՆՍՕՐՕՔ  
ՎԱՏԱՐԵՅԷՔ ՎԱՊՈՒԵՂՈՎ  
ԵԿԵՂԵՅՈՅ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ

Սոյն թերթիւն ե-առաւարկ ստանալոյ  
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԵՆ ՈՒՊՈՒՐԿԵՅԷՔ  
eglise58@sourphagop.com-ը

ՀԻՒԱՆՈՒՆԵՐՈՒ ԱՅԵՂՈՒԹԻՒՆ  
Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.  
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի.  
514 331 5445 x203 կամ 514 909 5203

ՆԱԽՈՐԻ ԹԻՒԵՐՈՒ ԿՐԱՔ ԳՏՆԵՂ  
[www.sourphagop.org/lradou](http://www.sourphagop.org/lradou)  
ԿԱՅԷԶԻՆ ՎՐԱՅ